

## ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ՋԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ  
ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ

### **«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք**

### **Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայություն**

1. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը հաստատում է՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.1-րդ հոդված)

2. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատում (փոփոխում) է՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.3-րդ հոդված)

3. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոնների հաստիքացուցակը հաստատում (փոփոխում) է՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.3-րդ հոդված)

4. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում (փոփոխում) է՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.4-րդ հոդված)

5. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունի այն անձը, ով՝

դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված է,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.6-րդ հոդված)

6. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոնը զբաղեցվում է

արտամրցութային կարգով կամ մրցույթով,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.7-րդ հոդված)

7. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոնում արտամրցութային կարգով կարող է նշանակվել քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցված այն քաղաքացիական ծառայողը, որը

միաժամանակ բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները, համարվում է քաղաքացիական հատուկ ծառայության միևնույն խմբի պաշտոն զբաղեցնող կամ առնվազն ունի տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճան, այդ մասին տվել է գրավոր համաձայնություն,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.8-րդ հոդված)

8. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ քան`

մեկ ամիս առաջ

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.9-րդ հոդված)

9. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է`

առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի եւ զանգվածային լրատվության այլ միջոցներով

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.9-րդ հոդված)

10. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը կարող է անցկացվել`

համակարգչի միջոցով կամ գրավոր,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.9 (մաս 7)-րդ հոդված)

11. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի համակարգչում զետեղված հարցաշարը պետք է հրապարակվի ոչ ուշ, քան մրցույթ անցկացնելուց

մեկ ամիս առաջ,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.9 (մաս 9)-րդ հոդված)

12. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջադրանքների առնվազն՝

80 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.9 (մաս 12) -րդ հոդված)

13. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հաղթող են ճանաչվում այն մասնակիցները, ովքեր քվեարկության արդյունքով հավաքել են մրցութային հանձնաժողովի՝

քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.9 (մաս 15)-րդ հոդված)

14. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝

նույն օրը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.9 (մաս 16)-րդ հոդված)

15. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.10-րդ հոդված)

16. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է

քրեակատարողական վարչության պետը:

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.10-րդ հոդված)

17. Քաղաքացիական ծառայողի անմիջական ղեկավարը քաղաքացիական ծառայողի ծառայողական բնութագիրը ներկայացնում է՝

ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.14 (մաս 11)-րդ հոդված)

18. Քրեակատարողական ծառայությունում յուրաքանչյուր քաղաքացիական հատուկ ծառայող.

առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.15-րդ հոդված)

19. Նշվածներից որն է ճիշտ.

քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 65 տարին լրանալը:

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.16-րդ հոդված)

20. Նշվածներից որը քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի հիմնական իրավունքներից չէ.

մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.17-րդ հոդված)

21. Նշվածներից որը քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի հիմնական պարտականություններից չէ.

իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատականներին և այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ ներկայացնելը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.18-րդ հոդված)

22. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողն իրավունք ունի՝

կատարելու գիտական, մանկավարժական, ստեղծագործական և բուժական վճարովի աշխատանք,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.19-րդ հոդված)

23. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողն իրավունք ունի.

ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.19-րդ հոդված)

24. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է.

քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 10 և ավելի տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.19-րդ հոդված)

25. Պետությունը քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի համար չի երաշխավորում.

անձեռնմխելիություն,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.21-րդ հոդված)

26. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի նկատմամբ չի կարող կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակը.

կրճաբանչանով պարգևատրում,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.25-րդ հոդված)

27. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու, կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի նկատմամբ չի կարող կիրառվել հետևյալ կարգապահական տույժը.

զբաղեցրած պաշտոնի իջեցում

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.26-րդ հոդված)

28. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերից չէ.

ժամանակավոր անաշխատունակության հետեւանքով մեկ տարվա ընթացքում երեք ամիս աշխատանքի չներկայանալը, չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.27-րդ հոդված)

29. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը.

65 տարին է

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.28-րդ հոդված)

30. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության մասին օրենսդրության կիրառման հետ կապված վեճերը լուծվում են.

արդարադատության նախարարի կողմից կամ դատական կարգով

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.31-րդ հոդված)

31. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում քաղաքացիական ծառայողը տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ կարող է.

մինչև մեկ տարի ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.28-րդ հոդված)

32. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակ չէ.

օրենքով սահմանված կարգով աշխատավարձի բարձրացումը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.25-րդ հոդված)

33. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու, կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի նկատմամբ չի կարող կիրառվել հետեւյալ կարգապահական տույժը.

օրենքով սահմանված կարգով աշխատավարձի իջեցում,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.26-րդ հոդված)

34. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան, բացառությամբ քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն դասային աստիճանի, շնորհվում է համապատասխան դասային աստիճանն ստանալուց

ոչ շուտ, քան երեք տարի և ոչ ուշ, քան հինգ տարի հետո:

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.2 -րդ հոդված)

35. Նշվածներից որը քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների դասակարգման խմբերից չէ.

քաղաքացիական հատուկ ծառայության միջին խմբի պաշտոններ.

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.1-րդ հոդված)

36. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների բարձրագույն խումբը

չի բաժանվում ենթախմբերի:

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.1 -րդ հոդված)

37. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունի այն անձը, ով՝

օրենքով սահմանված կարգով չի անցել պարտադիր զինվորական ծառայություն:

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.6-րդ հոդված)

38. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է՝

քրեակատարողական ծառայության համապատասխան ստորաբաժանումը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.9-րդ հոդված)

39. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակվում է, եթե կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից չի անցել՝

վեց ամսից ավելի՝ չհաշված հիվանդությունը կամ գործուղման մեջ գտնվելը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.26.3-րդ հոդված)

40. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ չի նշանակվում, եթե կարգապահական խախտում կատարելու օրվանից անցել է՝

մեկ տարուց ավելի:

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.26.4-րդ հոդված)

41. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողին պաշտոնից ազատելու հիմք է.

ատեստավորմանը երեք անգամ չներկայանալը,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.27.1/5-րդ հոդված)

42. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակման կրկնակի մրցույթի ժամանակ՝

մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում, և այն անցկացվում է 10-օրյա ժամկետում՝ ընդհանուր հիմունքներով,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.9.25-րդ հոդված)

43. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողների փաստաթղթային ատեստավորման արդյունքներով ատեստավորման հանձնաժողովը ընդունում է հետևյալ որոշումը.

համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.14.20-րդ հոդված)

44. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողների թեստավորման և հարցազրույցի արդյունքներով ատեստավորման հանձնաժողովը չի ընդունում հետևյալ որոշումը.

ատեստավորումը հետաձգել և քաղաքացիական հատուկ ծառայողին գործուղել վերապատրաստման,

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.14.24-րդ հոդված)

45. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայողների կադրերի ռեզերվը վարում է.

քրեակատարողական վարչությունը:

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 51.16.1-րդ հոդված)